

ԳԵՆԴԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հակոբ Օշականի «Խոնարհները» ժողովածուում*

Բանալի բառեր – «Խոնարհները», քոբուրներ, սեռ, սեր, գենդեր, հոգեբանական նույնականացում, կին, սպասում, երագ, իրականություն, ներաշխարհի դրամա:

Մուտք

Հայ մեծանուն գրող Հակոբ Օշականը (Քյուֆեճյան, 1883–1948) ստեղծագործել է տարբեր ժանրերով (պատմվածք, հեքիաթ, վեպ, վիպակ, թատերգություն, քնարական արձակ, բանաստեղծություն, քննադատական հոդված, դիմանկար, մենագրություն):

Թեև 1902-ին «Արևելք» օրաթերթում լույս է տեսել նրա «Առաջին արցունքը» պատմվածքը, բայց իրապես Հ. Օշականը գրական ասպարեզ է իջել 1910-ական թթ. մամուլում տպագրված պատմվածքներով, որոնք տեղ գտան հետպատերազմյան շրջանում Պոլսում հրատարակված «Խոնարհները» (1921) և «Խորհուրդներու մեհեանը» (1922) գրքերում:

Հ. Օշականի արվեստն ունի կյանքի լայն ընդգրկում և իրականության ընկալման գեղագիտական մի շարք սկզբունքներ, որոնք դառնում են նրա հետևյալ բանաձևի արտահայտիչը. «Գրել կը նշանակե՛ **կեանք հիսել**»¹: Կյանքին հնարավորինս մոտ մնալու սկզբունքով է գրված նրա «Խոնարհները» ծողովածուն, որի համապատկերում գրողը ներկայացնում է մարդկային կյանքը՝ իր բոլոր կողմերով:

Մույն աշխատանքը նպատակ ունի նոր տեսանկյունից քննելու Հ. Օշականի «Խոնարհները». վերլուծվում են հերոսների վարքի՝ սոցիալ-մշակութային գործոններով պայմանավորված առանձնահատկությունները, շարքը դիտարկվում է որպես գենդերային խնդիրների արծարծման շրջանակ:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11. 2017:

1 **Օշական Յ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 209: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyay, hat. 10, Antilias, 1982, p. 209].

1. Միրո և սեռի խնդիրը

Գենդերի մասին հիշատակումներ եղել են 1300-ական թվականներից մինչև 1900-ական թթ. գրված պատմական, գեղարվեստական, մարդաբանական և կրոնական տարբեր աշխատություններում, սակայն այդ տերմինը գիտական բառապաշար է մուտք գործել 1950-ական թթ.: «Գենդեր» հասկացության ներմուծումը գիտության մեջ հնարավորություն տվեց սեռի սոցիալ-մշակութային կողմը տարանջատել կենսաբանականից: **Գենդերը մի կատեգորիա է, որը բնութագրում է տղամարդկանց և կանանց՝ սոցիալ-մշակութային գործոններով պայմանավորված առանձնահատկությունները**²: Հայտնի չէ՝ Օշականն այս հարցադրումները իր գրականության մեջ շոշոփելիս հետևել է իր ժամանակին եղած տեսական գրականությանը, թե ոչ, որովհետև նրա պատմվածքներից ոչ մեկում չկա «գենդեր» բառը: Բայց այն, որ գրողը հստակ գիտակցել է սեռերի կենսաբանական և հոգեբանական տարբերությունները, արդեն իսկ ակնհայտ է: Այս հանգամանքը թույլ է տալիս վստահորեն ասելու, որ Հ. Օշական գրողին բնորոշ է **չգիտակցվածը գեղարվեստորեն ներկայացնելու ունակությունը**:

Հ. Օշականն իրականության ընկալման ու պատկերման մի շարք առանցքային սկզբունքներ ունի³, որոնցից մեկն էլ պայմանավորված է սեռի բացարձակացումով. «Ինձի համար գոնե արուեստը սեռն է (sex)»⁴, - գրում է Հ. Օշականը: Գրականության մեջ սեռի և սիրո հարցը, ըստ Օշականի, կարևոր նշանակություն ունի, մինչդեռ, դարձյալ ըստ Հ. Օշականի, այն անտեսվել կամ որոշակի կաղապարով է դրսևորվել հայ գրողների ստեղծագործություններում (նշում է Թվկատինցու, Ջարդարյանի, Սիպիլի անունները)⁵: Գրականությանն այս սկզբունքով մոտենալու լավագույն օրինակը, անշուշտ, Օշականի վեպերն են, սակայն կարևոր են նաև գրողի «Խոնարհները» շարքի պատմվածքները (1921 թ.) որպես սկիզբ՝ գրված դեռևս 1910-ական թթ., որոնցում Հ. Օշականը նոր մոտեցում է ցուցաբերում հայ գրականության մեջ մարդու ներաշխարհը բացահայտելու խնդրին: Այս մասին գրականագետ Ս. Դանիելյանը գրում է. «Նրա համար ընդունելի է մարդու՝ որպես միջավայրից, ընկերային «հազար ու մի կապից» փրթած անհատի կենսունակ տեսությունը, որը գրողին հակում է կերպարի կամ նրա նախատիպի մեջ կենսաբանական արմատի ճանաչողութեան, վարքի մեջ՝ բնագրի ուժին, կրքի տիրապետութեանը: Սա նորարարական մոտեցում է մեզանում, որն անցնում է իրեն **Ֆ. Դոստոևսկու** և **Մ. Գրուստի** գրական ժառանգութեան իրացման փորձով»⁶:

«Խոնարհներ»-ում Հ. Օշականը կերտել է առավելապես մարդկային մի

2 Այս մասին մանրամասն տես **Խաչատրյան Ն. Գ.**, Գենդերի սոցիալական հոգեբանություն, Եր., 2007, էջ 5: [**Khachatryan N. G.**, Gender socialakan hovebanutyun, Yer., 2007, p. 5].

3 Տես **Սեյրանյան Լուսինե-Լիլիթ**, Օշականի տիեզերքը շարժող ուժերը, «Գրականագիտական Խանդես», Եր., 2011: [**Lusine-Lilit Seyranyan**, Oshakani tiyezerqə sharjokh ujerə. "Grakanagitakan handes", Yer., 2011].

4 Մայրիններու շուրին տակ, Պէյրութ, 1983, էջ 21: [Mayrineru shuqin tak, Peyrut, 1983, p. 21].

5 Տես **Օշական Յ.**, Համապատկեր արևմտահայ գրականութեան, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 112: [**Oshakan H.**, Hamapatker arevmtahay grakanutyun, hat. 10, Antilias, 1982, p. 112].

6 **Դանիելյան Սուրէն**, Միջուկի տրոհումը, գիրք 1, Եր., 2011, էջ 65: [**Danielyan Suren**, Mijuki trohumə, girq 1, Yer., 2011, p. 65].

տեսակի՝ աղքատների, խեղճերի, խենթերի կերպարներ, որոնց տալիս է մեկ ընդհանրական անուն՝ խոնարհներ, իսկ մասնավորապես՝ քոքուրներ: «Համապատկեր արևմտահայ գրականութեան» գրքում Հ. Օշականը քոքուրներին երկակի բնութագրումներ է տալիս: Մի դեպքում նա քոքուր անվանում է «պակաս ծնածներին», մեկ այլ հատվածում գրում է. «Քոքուրը ո՛չ խենթն է, ո՛չ ապուշը, ո՛չ խօթացեալը, ոչ ալ արեան ժառանգութանը մէջ զարնուած ապագայ անդամալոյծը: Արկած մը, որքութիւն մը, մանկութեան տարիներուն խոշոր խռովք մը յաճախ կը յօրինեն տիպարը դեռ պատանութենէն ասդին»⁷: Եթե հակասական այս բնութագրումները ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ քոքուրները մտավոր, ֆիզիկական արատով կամ ձակատագրի բերումով «հոգով քոքուր» դարձած անձինք են: Թեև «Խոնարհները» շարքում կա երկու պատմվածք («Մնադմագել Եվա», «Խենթ Սողմեն»), որոնց հերոսները կանայք են, սակայն Հ. Օշականի կերտած քոքուրները հիմնականում տղամարդիկ են՝ զուրկ ենթադրյալ տղամարդկային հատկանիշներից: Ուստի կարելի է կարծել, որ «քոքուր» բառը պատմվածքներում օգտագործվում է քիբիր, քիբեր՝ քույր իմաստով⁸:

Թեև «Խոնարհների» հերոսները հիմնականում աղքատ, ընչազուրկ գյուղացիներ են, սակայն Հ. Օշականի նպատակը ոչ թե նրանց սոցիալական վիճակի պատկերումն է, այլ հերոսների հոգեկան դրամայի, վարքագծի բացահայտումը, որը գրողը մեկնաբանում է «կենսաբանական ջիղի» թելադրանքով, մարդու վրա նրա ունեցած մեծ ազդեցությամբ: Գրականագետ Գր. Պըլտյանը նկատում է. «**Խոնարհները** դիմանկարներու շարք մըն է, պզտիկ կառուցումներու՝ ուր Օշական-Քիւֆեճեան կը հետապնդէ սեռը, հայ գիւղին սեռային, այսինքն՝ հ ո գ ե կ ա ն կառոյցին քննութիւնն ու վերլուծումը կ'ընէ»⁹:

«Խոնարհներ»-ի կերպարները մեծ մասամբ ունեցել են իրենց նախատիպերը, և հեղինակը ճանաչել է նրանցից շատերին, ծանոթ է եղել նրանց ներաշխարհին: Այս մասին Հ. Օշականը գրում է. «Մեր կողմերը այդ մարդերը կը պահուէին մահուան շատ մօտիկ տառապանքի մը մէջ»¹⁰: «Երկինքէն ինկող կինը» պատմվածքը ընդհանրացնում է քոքուրների հոգեվիճակը, նրանց ձգտումները, սերերը, երազը՝ ցույց տալով քոքուրների «գերագոյն տագնապը, որ կնիկն էր», կին ունենալու սպասումը, տարփանքը: Սակայն հասարակությունը զլանում է նրանց կին տալ, որից էլ ծնվում է իրենց դրաման: Իրական կյանքում կին չգտնելով՝ քոքուրները փորձում են երազներում գտնել նրան և հավատում են, որ կինը՝ որպես անիրականանալի, անհասանելի երազ, պիտի իջնի երկնքից: Թվում է, թե սպասված երջանկությունը կդառնա իրական, բայց ձակատագիրը ի չիք է դարձնում այն: Եվ ցավալի էր քոքուրների համար, որ իրենք աշխարհ են եկել և պիտի լքեն այս աշխարհն առանց կնոջ հաճույքը վայելելու:

7 Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականութեան, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 110: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyen, hat. 10, Antilias, 1982, p. 110].

8 Տե՛ս Աճառեան Հրաչեայ, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1116, Աղայան Էդ., Արդի հայերէնի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1569: [Agharyan Hr., Hayeren gavarakan bararan, Tiflis, 1913, p. 1116, Aghayan Ed., Ardi hayereni bacatrakan bararan, Yer., 1976, p. 1569].

9 Պըլտեան Գրիգոր, Մարտ, Անթիլիաս, 1997, էջ 67: [Plyan Grigor, Mart, Antilias, 1997, p. 67].

10 Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականութեան, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 110: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyen, hat. 10, Antilias, 1982, p. 110].

Գրականագետ Լ. Սեյրանյանը նկատում է, որ Հ. Օշականի «... նպատակը տարփանքի գերակայության գեղարվեստական պատկերումն է, այդ «գորավոր ու անողոր», մահվան հետ համեմատելի իրողության արտացոլումը»¹¹: Սակայն գրողը իր հերոսներին չի թողնում տարփանքի իշխանության տակ: Նա իր հերոսներին տանջող այդ ցավը ներկայացնում է ախտերից ու բնագոյներից դուրս, որի մասին վկայում է նաև ինքը. «Հոս Օշական յաջողած է այդ մարդերը տագնապեցնող մեծագոյն զրկանքը ազատագրել մասնատորին, ախտատորին, ապշամերձ զառածանքին տկարութիւններէն ու զայն վերածել իրաւ յուզումի»¹²: Նա բացահայտում է այդ հերոսների հոգին առավել զգայական, անձնական մակարդակներում փոխկապակցելով գերբնականը և բնականը, որով ոչ միայն առհասարակ մարդն է տարբերվում կենդանուց, այլև յուրաքանչյուր անհատ մյուսներից:

Հայտնի է, որ սեռի հետ է կապված մարդկային կենսականությունը: Իր «Տոգսանը», «Հորքուր Վարդան», «Աղբարիկը» պատմվածքներում Հ. Օշականը սեռի և սիրո հետ է կապում մարդկային կենսականության խորհուրդը՝ ցույց տալով, որ բազում զրկանքներ կրած քոքուրների ցանկությունը կին և երեխաներ ունենալն է. «Կնիկ առնել, մեկ տեղանի անկողնի մեջ պառկիլ, զավակներ ունենալ, **պապո** կանչվիլ: Անուշ բաներ ըլլալու էին ասոնք»¹³: Սա կարևոր խնդիր է ամեն մարդու և անսահմանորեն կարևոր հատկապես հայ մարդու համար: Եվ պատահական չէ, որ երեխաներ ունենալու ցանկությունը, դրա կարևորությունը Հ. Օշականի հերոսները զգում են հասուն տարիքում:

Ներկայացվածը հերոսների կյանքի և վարքագծի ընդհանուր բնութագրական-նկարագրական պատմությունն է: Եվ քանի որ գենդերի սոցիալական հոգեբանության համար հոգեբանները առավելապես կարևորում են գենդերային նույնականության հոգեբանական և ֆունկցիոնալ-դերային մակարդակները¹⁴, և հաշվի առնելով, որ Հ. Օշականի գործերում գենդերային նույնականության և տարբերության երևույթները նկատվում են առավելապես այս մակարդակներում, հերոսների վարքագիծը քննության ենթարկենք մեթոդաբանական այս դիրքերից:

2. Հոգեբանական նույնականացում

Հ. Օշականի հերոսների գենդերը շոշափելի է դառնում, երբ այն քննում ենք հոգեբանական նույնականության տեսանկյունից և պարզում, որ նրանցից ոմանց ներաշխարհը պայմանավորված է սոցիալ-մշակութային ազդեցություններով: Քանի որ յուրաքանչյուր հասարակություն ունի մշակութային որոշակի նորմեր և արժեքներ, որոնք էլ հասարակության մեջ ձևավորում են գենդերային հարաբերություններ, Հ. Օշականի հերոսների վարքագիծը նախ և առաջ մեկնաբանվում է ազգային սոցիալ-մշակութա-

11 Սեյրանյան Լուսինե-Լիլիթ, նշված աշխատությունը, էջ 222: [Օր. Cit., p. 222].

12 Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 10, Արթիլիսա, 1982, էջ 112: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyun, hat. 10, Antilias, 1982, p. 112].

13 Օշական Հակոբ, Երկեր, Եր., 1979, էջ 35: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p. 35].

14 Տնն. Խաչատրյան Ն. Գ., Գենդերի սոցիալական հոգեբանություն, Եր., 2007, էջ 141: [Khachatryan N. G., Genderi socialakan hogebanutyun, Yer., 2007, p. 141].

յին դրսևորումներով: Հոգեբանական վիճակների քննությունից առաջ հեղինակը բավականին տեղեկություններ է հաղորդում հերոսների մասին՝ միաժամանակ ներկայացնելով այն միջավայրը, որտեղ նրանք ապրել և ձևավորվել են:

Հ. Օշականի ներկայացրած քոքուրները երկու խմբի են բաժանվում. մարդիկ, որոնց քոքուրությունը պայմանավորված է բնածին արատով և մարդիկ, որոնք քոքուր դառնում են ճակատագրի բերումով՝ ստանալով «հոգով քոքուր» բնութագիրը: Ուրեմն «քոքուրացման գործընթացը» ներառում է ժառանգականության գործոնը, որի դեպքում հերոսների հատկանիշները անփոփոխ են, և փոփոխականության գործոնը, որը նպաստում է նոր հատկանիշների ձեռքբերմանը: Այս դեպքում ակնհայտ է դառնում, որ «խոնարհների» վարքագիծը ձևավորում են բանահյուսական պատմությունները՝ ավանդազրույցները, սնահավատական գրույցները, և բարքերն ու սովորույթները: Այն քոքուրները, ովքեր «պակաս տախտակով կը ծնին ու կ'ապրին այդ պակասին ծանր հակազդեցությանը տակ»¹⁵, գուրկ են ըմբոստանալու կարողությունից, իսկ նրանք, ում սնահավատությունը կամ գյուղի բարքերն են խեղճացրել, ձեռնարկում են որոշակի միջոցներ, փորձում են ելքեր որոնել: Նրանցից ոմանք գտնում են մնացյալ կյանքը իմաստավորելու միջոցներ: Բայց քոքուրների մեծ մասը կործանվում է:

Երագի և իրականության բախումից առաջացած կործանումը տեղի է ունենում տարբեր պատճառներով: Հերոսներից ոմանք չեն կարողանում ձերբազատվել մոր ազդեցությունից («Առաջին արցունքը»), ոմանք՝ հայրական իշխանությունից («Թուրքմենին աղջիկը»), մի քանիսը զոհ են դառնում կեղծիքին («Մաղաքը», «Աղբարիկը»), ոմանք՝ սնահավատությանը («Հորքուր Վարդան») և դավաճանությանը («Վաթմանը»): Իսկ տղամարդու անհատականացումը ենթադրում է ինքնագիտակցություն, մոր ազդեցությունից ձերբազատում, հայրական իշխանությունից ազատում, ըմբոստություն որդիական կարգավիճակի դեմ և այլն:

Ուրեմն այս մարդկանց խեղճ ու անօգնական դարձնում են իրենց իսկ նմանները: Հասարակությունը ստիպում է նրանց ապրել ոչ թե բնության օրենքներով, այլ իր ստեղծած սոցիալ-մշակութային նորմերով ու արժեքներով: Գրողը ցույց է տալիս, որ այս հերոսների վարքագիծը, որն ինքնին ենթադրում է շարժ և զարգացում, ձևավորվում է բախումների ուղեկցությամբ՝ հանգեցնելով կործանման: Եվ որքան էլ տողերի արանքում նկատելի է գրողի ապրած ցավը կործանված ճակատագրերի համար, այնուամենայնիվ, նա հանգում է այն մտքին, որ «Գեղին իմաստությունը չէր կրնար սխալած ըլլալ»¹⁶: Ուրեմն գրողը համաձայն է Ջ. Ֆրոյդի այն տեսության հետ, որ առանց սոցիալական միջավայրի որոշակի բռնաձնշման, հնարավոր չէ անցումը մարդկային որակի: Եվ այս տեսանկյունից քննելով Հ. Օշականի պատմվածքները՝ պարզում ենք, որ կարևորելով ազգային մշակույթի, բարքերի ու սովորույթների դերը՝ գրողը դուրս է գալիս հայ

15 Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 110: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyanyan, hat. 10, Antilias, 1982, p.110].

16 Օշական Հակոբ, Երկեր, Եր., 1979, էջ 246: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p. 246].

մարդու սահմաններից՝ նկատի ունենալով **մարդուն առհասարակ**: Նրա նպատակը ոչ թե հասարակության քննադատությունն է, այլ սոցիալ-մշակութային հատկանիշներով պայմանավորված մարդու ներաշխարհի դրամայի բացահայտումը:

3. Գենդերային նույնականության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը

ա) Օբյեկտիվ կողմ: Ավստրալացի հասարակագետ Ռեվլին Կոնելը, որը գենդերային հետազոտությունների համատեքստում առնականությունը ուսումնասիրող առաջին գիտնականներից էր, առաջ է քաշում այն տեսությունը, որ առնականությունը և կանացիությունը հասարակական ու մշակութային երևույթներ են, և որ ամեն մշակույթ ու ժամանակաշրջան ունի առնականության իր՝ տվյալ հասարակության համար «ընդունելի, ակնկալվող» մոդելը¹⁷: Հ. Օշականը 20-րդ դարի սկզբին, երբ դեռ գիտական բառապաշարում չէին առանձնացվել «սեռ» և «գենդեր» տերմինները (Ռոբերտ Սթոլլեր), իր պատմվածքների հերոսների օրինակներով ցույց է տալիս, որ գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ: Իր պատմվածքներում գրողը ներկայացնում է իր ժամանակի հասարակությունը, որն ինքն էր որոշում, թե որքանով է տղամարդը տղամարդ և օժտված տղամարդկային հատկանիշներով՝ ընդգծելով, որ այդ պատկերացումները կարող են փոփոխվել:

Ժամանակի հասարակության ընկալմամբ (հոգեբանության մեջ՝ գենդերային նույնականության օբյեկտիվ կողմ)՝ քոքուրները որպես այլ սեռի ներկայացուցիչ էին դիտարկվում: Հերոսների այսպիսի բնութագրումների միջոցով գրողը նրանց վերագրում է կնոջ սեռին բնորոշ հատկանիշներ: Օրինակ՝ անունը՝ հորքուր Վարդան («Հորքուր Վարդան»), կնիկ Մարգար («Շահպազ»), մարդուկ («Աղբարիկը»), արտաքինի բնութագրությունը՝ «մեջքը փորով կնկա պես դուրս տնկված» («Տոգսանը», էջ 29), «երիտասարդ մը՝ կանացի դեմքով» («Վաթմանը», էջ 222), ձայնի տեմբրը՝ «տղու (նկատի ունի երեխայի - Մ. Ղ.) պես ձայնով, որ վառած կոկորդի մը չափված հեկեկանքովը դուրս կուգար» («Մաղաքը», էջ 201), շարժումների ոճը, վարքագիծը՝ «տղու մը պես անգոր և թռչունի մը պես կամազուրկ» («Վաթմանը», էջ 226), «Ցախ ոտքերը խմորի պես կակուղ» («Համարը», էջ 175) և այլ արտահայտչամիջոցներ, որը հոգեբան Հոֆֆմանը անվանում է «գենդերային դիսփլեյ»¹⁸, թույլ են տալիս քոքուրներին նույնականացնել կանացի սեռի հետ: Երբեմն կնոջը բնորոշ հատկանիշներից զատ՝ գրողը նրանց է վերագրում այնպիսի բնութագրիչներ, ինչպես, օրինակ՝ «գլուխը սոխի պես», «կապիկի նմանվող» («Մաղաքը», էջ 194), «հին անհամակրելի, տգեղ ու հաստ մարդը» («Աղբարիկը», էջ 159), որ առավել ընդգծի նրանց մարմնի տգեղությունն ու տձևությունը: Քոքուրների կերպարների ամբողջական և համակողմանի բնութագիրը տալիս է հենց ինքը՝ Հ. Օշականը, որից դժվար

17 Տե՛ս **Connell Raewyn**, The social organization of masculinity, Feminist theory reader, New York, 2013, p 253:
18 Տե՛ս **Խաչատրյան Ն. Գ.**, Գենդերի սոցիալական հոգեբանություն, Եր., 2007, էջ 98: [**Khachatryan N. G.**, Genderi socialakan hogebanutyun, Yer., 2007, p.98].

է հասկանալ նրանց սեռը և տարիքը. «Գիւղը կ'ունենայ, այս գնով **համով մարդը**», որ ո՛չ երիտասարդ է, ո՛չ ալ ծեր, ո՛չ տղայ, ո՛չ ալ չափահաս,- այլ՝ ամէնը մէկ»¹⁹: Ահա սա է պատճառը, որ քոքորները սիրված էին և կանաց, և տղամարդկանց, և փոքրերի շրջանում. «Անիկա պզտիկներուն հետ պզտիկ է: Առանց տառապանքի անոնց խաղերէն բաժին կ'առնէ: Անիկա երիտասարդները կը շահագրգռէ իր տառապանքովը սեռէն: Ասոր համար է, որ կը սիրուի բոլորէն»²⁰: Նույնիսկ «չխոսկան» կանայք զրուցում էին նրանց հետ, նրանց էին վստահում իրենց գաղտնիքները: Քոքորների ֆիզիկական ներկայությունը կանանց շրջանում աննկատ է մնում. «Կիները չեն վախնար անոր քով իրենց սեռէն, կը խօսին, առանց ուշադրութեան առնելու անոնց ներկայութիւնը»²¹:

«Համապատկեր արևմտահայ գրականութեան» ուսումնասիրության մեջ քոքորներին տված Հ. Օշականի բնութագրումները մասնակիանում են հատկապես «Պաղտո», «Հորքուր Վարդան» և «Վայթմանը» պատմվածքներում: Աղքատ պատանի Պաղտոն վարձվել էր Պետրոսյանների հիվանդ աղջկան ուրախացնելու համար: Իսկ երբ նրա սիրտը սկսում է թրթռալ նրանց կրտսեր աղջկա նկատմամբ ունեցած սիրուց, և որքան էլ տղան ակնարկում է այդ մասին, նույնիսկ ընկնավորությամբ տառապող աղջիկը (հայ իրականության մեջ ընկնավորությունը մեծ թերություն էր համարվում) ուշադրության չի արժանացնում նրան: Եվ պատճառը ոչ թե սոցիալական անհավասարությունն էր, այլ այն, որ Պաղտոն որպես արական սեռի ներկայացուցիչ չէր ընկալվում: Աղջիկները Պաղտոյի ներկայությամբ չէին ամաչում իրենց մերկությունից. լողանում էին, ցուցաբերում էին անսովոր մտերմություն, թույլ էին տալիս նրան գրկել ու օրորել իրենց, ազատություն տալ ձեռքերին, անպատշաճ կատակներ անել:

Կարձ և դիպուկ նկարագրությունների միջոցով գրողը ընդգծում է աղջիկների անտարբերությունը Պաղտոյի սեռի նկատմամբ: Օրինակ՝ երբ բաղնիքում Պաղտոն հայտնվում է մերկ աղջիկների դիմաց, աղջիկները, առանց հուզվելու, ամաչելու, պատվիրում են նրան բերել իրենց հագուստները՝ շտապեցնելով. «Ծո՛ հայտե, հիմա մարդ կուգա»²²: Այսինքն՝ ցանկացած մարդու ներկայությունից նրանք անոթ էին զգում, բացի Պաղտոյի ներկայությունից:

Քոքորներից Վարդանը («Հորքուր Վարդան»), գյուղի ժամկոչը լինելով, յուրահատուկ ընդունելություն ուներ կանանց շրջանում: Գյուղի բոլոր կանանց՝ նշանված աղջիկներին, հասուն կանանց, պատավներին, հորքուր էր անվանում: Այս հանգամանքն էլ պատճառ է դառնում, որ նրա անունին ավելանա «հորքուր» մակդիրը: Միմյանց հետ կատակող, իրար կամօղ կանայք նույն անհոգությամբ և առանց ամաչելու ամբողջ մարմնով հպվում էին Վարդանին, ընկնում նրա գիրկը: Եվ երբ սիրո բուռն ցանկությունից մթազնած ուղեղով նա գիշերով հանկարծակի հայտնվում է այրի կնոջ՝ Հեղնա ապլայի տանը և, չնայած դողդողացող ձայնով, բայց բա-

19 **Օշական 3.**, Համապատկեր արևմտահայ գրականութեան, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 111: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyanyan, hat. 10, Antilias, 1982, p.111].

20 Նույն տեղում, էջ 111: [Ibidem].

21 Նույն տեղում, էջ 111: [Ibidem].

22 **Օշական Հակոբ**, Երկեր, Եր., 1979, էջ 88: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p.88].

վականին բացորոշ հայտնում է իր ցանկությունը՝ «Աստվածուկը տաքուկ գիշերներ տա»²³, միննույն է՝ կնոջ համար նրա պահվածքը մնում է անորոշ. «Այրին շատ ինքնաստիպ գտավ օրհնենքը ու առանց նեղանալու քիչ մը զարմացավ միայն»²⁴. չէ՞ որ նա «Գեղին ժամկոչն էր, Աստուծո նվիրված, հրեշտակի հոգի ունեցող»²⁵:

Այս բոլոր բնութագրումներով գրողը ընդգծում է ոչ թե կանանց թեթևաբարո վարքը, այլ նրանց վերաբերմունքը քոքուրների սեռի նկատմամբ: Եվ եթե նույնիսկ քոքուրների սեռը, ներկայությունը և զգացածը կանանց շրջանում նկատելի էր, ապա նրանք արժանանում էին ծաղրի կամ անլուրջ վերաբերմունքի. «Երբեք չուզեց մտահոգ ըլլալ այդ խենթի սերին հետևանքներովը: Ի՞նչ էր վերջապես այդ տղան. փողոցեն գտնված զվարճալիք մը, զոր սիրած ատենդ ազատ ես մեկդի նետելու: Շատ բարի կըլլաս, երբ խաղալիքը անվնաս ձեռքեդ դուրս ելլե»²⁶: Ստացվում է, որ ֆեմինիստ փիլիսոփա Ջուդիթ Բաթլերի՝ 1990-ական թթ. առաջ քաշած այն տեսությունը, ըստ որի՝ սեռը՝ ֆիզիկական մարմինը, մեզ տեսանելի է միայն գենդերի պատճառով, և գենդերի գաղափարն է նախ և առաջ մեզ թույլ տալիս սեռը նկատել, 1920-ականներին և դրանից առաջ իր գործերում հաստատել է Հ. Օշականը:

բ) Սուբյեկտիվ կողմ: Եթե շեշտը դնենք քոքուրների ապրումների վրա, ապա կարող ենք ասել, որ թեև կենսաբանական մակարդակում քոքուրներն իրենց համարում էին նորմալ տղամարդ և ուզում էին, որ իրենց վերաբերվեն իբրև տղամարդու, հոգեբանական մակարդակում և վարքալիս դրսևորումներում (հոգեբանության մեջ՝ գենդերային նույնականության սուբյեկտիվ կողմ) նրանք իրենց տվյալ սեռի ներկայացուցիչ չէին համարում:

Այսպիսով, հերոսների գենդերային տարբերությունների խորացման հետևանքով սահմանափակվում են նրանց «Ես»-ի զարգացման և դրսևորման հնարավորությունները, որի պատճառով նրանք զրկվում են իրենց՝ որպես տվյալ սեռի ներկայացուցիչ դրսևորելու հնարավորությունից: Ընդգծվում են հակառակ սեռին բնորոշ հատկանիշները՝ պասիվություն, անվստահություն, հուզականություն: Այս ամենը ի վերջո հանգեցնում է միջանձնային շփման սահմանափակմանը: Քոքուրները մեկուսանում են: Սահմանափակվում է մարդկանց հետ հաղորդակցումը: Իսկ հաղորդակցման ոլորտի մասնագետները հետևյալ կարծիքներն են հայտնում: Իր «Talking Back» աշխատության մեջ Բեյ Հուքսը (Gloria Jean Watkins) նշում է, թե ինչպես միայն ինքնին խոսելը կարող է որպես դիմադրություն համարվել: Իսկ հոգեբան Մ. Քրոուֆորդը պնդում է, որ հենց հաղորդակցումն է ստեղծում գենդերը տվյալ հասարակության մեջ²⁷:

Մարդկանցից հեռու ապրելով՝ քոքուրները դժվարանում են արտահայտել իրենց նույնիսկ ամենապարզ մտքերը. «Լեռներուն մեջ ապրող

23 Նույն տեղում, էջ 126: [Ibidem].

24 Նույն տեղում, էջ 126: [Ibidem].

25 Նույն տեղում, էջ 123: [Ibidem].

26 Նույն տեղում, էջ 85: [Ibidem].

27 Մեջբերումը ըստ՝ **Կոչոյան Անի**, Գենդեր. պատմագիտական ակնարկ: [Kojoyan Ani, Gender. patmagitakan aknark]. <http://www.ysu.am/files/Ani-Kojoyan.pdf>

մարդը ամենն ավելի կտուժեր իր լեզվեն: Օրեր, նույնիսկ շաբաթներ կպատահեին, ուր քոքուրները քով-քովի գալով – կծուլանային լեզու փարտելու ու աչով կխոսեին»²⁸: Մարդախույս կյանքը ոմանց դարձնում է մարդատյաց («Տոպիճը»): Կյանքի այս կերպը մարդկանց աչքում ավելի է ընդգծում նրանց թերությունները:

Մարդկանց միջավայրում հայտնվելիս քոքուրները սպասում էին, մինչև մեկը իրենց խոսելու իրավունք արտոներ, իսկ դա լինում էր հիմնականում այն դեպքում, երբ հանրությունը ցանկանում էր լսել կնոջ մասին քոքուրների պատմությունը: Մնացած դեպքերում նրանք դժվարությամբ էին գտնում համապատասխան բառեր՝ արտահայտելու իրենց մտքերն ու ցանկությունները: Ուստի լռում էին, և որպես հասարակության լիարժեք անդամներ մնում էին եզրագծից այն կողմ:

Իրենց լուռ ցավերը քոքուրները բարձրաձայնում են միայն իրենց նմանների միջավայրում, նրանց կողքին են միայն իրենց լիարժեք անհատներ զգում, նրանց հետ են բնականոն փոխհարաբերություն հաստատում: «Տառապանքի հավաքությունների» վայրն էլ է խորհրդանշական՝ գյուղից դուրս, հեռու մարդկանցից, լեռների անմարդաբնակ անձավներում, որտեղ ազատ էին՝ իրենց զգացածը համարձակորեն բարձրաձայնելու՝ հիշելով կնոջ մասին իրական ու երևակայական պատմություններ՝ շատ հաճախ պատմածը կրկին ու կրկին պատմելով:

Ի տարբերություն այլ պատմվածքների՝ «Համբույրի մը պատմությունը», «Երկինքէն ինկող կինը» և «Մաղաքը» պատմվածքներում առավել տեսանելի է քոքուրների՝ կնոջ մասին պատմություններ լսելու և դրանցով ապրելու խումբը, որի հավաքությամբ աննպատակ չէր²⁹, այլ արարողության նման մի բան, հանդես, որի ժամանակ մեկը անհուն կսկիծով պատմելու է կին էակի մասին՝ դրսևորելով անպատմելին պատմելու մեծ վարպետություն:

Զրույցի ժամանակ քոքուրները իրար են փոխանցում իրենց «փորձն» ու «հմտությունները»: Եվ քանի որ բոլորը մեկ ընդհանուր ցավով էին տառապում, միմյանց հետ հաղորդակցվելու, միմյանց ընկալելու և փոխըմբռնման համար խոչընդոտներ չկային. հաղորդակցումն ընթանում էր անկաշկանդ, փոխադարձ վստահությամբ: Եվ եթե սովորական մարդկանց միջև հաղորդակցությունը ընթանում է հնարավոր վեճերի ուղեկցությամբ, ապա քոքուրները զերծ էին չհասկացված լինելու վախից, միմյանց համոզելու պարտականությունից, որովհետև բոլոր վեճերը կին գաղափարի համար էին, ուստի և ցանկալի էին, և բոլորը, առանց բացառության, անկեղծ հետաքրքրություն էին ցուցաբերում կանանց մասին պատմությունների նկատմամբ և հավատում էին դրանց ճշմարտացիությանը: Մաղաքի կնոջ՝ Բաբեթի մասին պատմվող պատմությունների ժամանակ Բաբեթը դառնում է բոլորի կինը. «Անոնք իրենց կողմեն Մաղաքին բերնովը կպագնեին Բաբեթը այտերեն, մազերեն, ծիծերեն, ուրկեց, որ հանդիպեր բառը

28 **Օշական Հակոբ**, Երկեր, Եր., 1979, էջ 194: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p.194].

29 Իր «Խոսելու և մասնակցության հարցը Հ. Օշականի «Խոնարհները» ժողովածուում» հոդվածում գրականագետ Ս. Դվոյանը ցցուն ընդհանրություն է տեսնում Օշականի՝ 1914 թ. գրված պատմվածքների և նույն շրջանում լուս տեսող «Մեհյան» ամսագրի՝ արվեստի միջոցով ազգ ստեղծելու ծրագրի միջև, որի նախաձեռնողներից մեկն էլ Հ. Օշականն էր:

իրենց շրթունքին վրա»³⁰: Քոքուրների երևակայության մեջ կինը այնքան կենդանի և տեսանելի էր, որին իրականում տեսնելու ցանկություն արդեն իսկ չկար: Եվ Հ. Օշականը հոգեբանություն հիմնավորում է այդ երևույթը. միգուցե անհասանելի գիտակցությունը թույլ չէր տալիս. «... Անոր մոտին անկյունն անգամ չէր այցելած կնիկ մը ունենալու երազը»³¹ կամ «Ոչ մեկը խելք չըրավ, կամ չուզեց գեղ իջնալ ու այդքան խանդավառությամբ սիրված կնիկը, գոնե հեղ մը, տեսնել իսկական աչքերով: Քոքուրները չէին գիտեր, ինչ բան գիրենք հեռու կպահեր այդ ստածումեն»³²: Հենց նույն գիտակցությունն էլ թույլ չի տալիս Մաղաքին, որի կինը իրականում աղայի հաճույքի համար էր, աղային կամ կնոջը որևէ բան ասելու:

Իրենց թշվառ վիճակի գիտակցությունը շրջանցելու համար միմյանց էին ցույց տալիս սեփական բազուկների ուժը, գտնում ինչ-ինչ արժանիքներ և զարմանում աշխարհի անարդարության վրա, երբեմն էլ տրտնջում, բողոքում, թե ինչու գյուղն աղջիկ է տալիս կաղերին, կույրերին, տարիքն առածներին, իրենք ինչո՞վ են վատ այդ մարդկանցից («Երկինքէն ինկող կինը»): Այսինքն՝ իրենց թերությունը գիտակցելով հանդերձ՝ քոքուրները շատ սուր էին ընդունում իրենց սեռի և զգացմունքների նկատմամբ հասարակության անտարբեր կամ արհամարհական վերաբերմունքը:

Սակայն ցավի ու արհամարհանքի նկատմամբ արտաքուստ անտարբեր թվացող քոքուրների կյանքն անցնում է հոգեկան ծանր տառապանքների միջով: «Սկսած «Առաջին արցունքից» մինչև «Շահապազը»՝ տարփանքը աճում է, զորանում, իշխում միահեծան՝ ավերելով խոնարհների հոգին ու բզկտելով մարմինը»³³: «Վաթմանը» պատմվածքում Հ. Օշականը գրում է. «Բայց կիները կշարունակեն իրեն քավիլ ու անցնիլ անտարբեր, առանց զգալու, թե անոնց ամեն մեկ հպումին տակ Վաթմանը զանգակի մը պես կկոտտա ներսեն ու կթորթա»³⁴: Սա քոքուրների համար ամենացավոտ բանն էր. «չէր տեսներ իր դողդողալը. չէր հասկնար իր աչքերուն հրդեհը. ու մանավանդ չէր լսեր իր սրտին զարկը, որ կուրծքը կոտրելու չափ ամուր կզարներ: Ինչու՞ չէր փոխվեր, ինչու՞ քիչ մըն ալ չէր շվարեր, երբ իրենց թևերը իրարու կուգային. մինչդեռ ինքը կդողար»³⁵: Այս հանգամանքը ստիպում է նրանց առավել սուր զգալու իրենց ցավը:

Մարմնավոր գեղեցկության պատկերման ու չապրված վայելքի բազմաթիվ օրինակներով Հ. Օշականը բացորոշ դնում է սեռականության ազատության խնդիրը: «Հորքուր Վարդան» պատմվածքում գրում է. «Տազնապը շարունակվեցավ ամիս մը ամբողջ: Քունը թռավ աչքերեն: Ալեկոծ հոգիին մեջ այդ բռնավոր պետքը տակավ կուռենար, կուրծքին վանդակը կոտրելու չափ»³⁶ կամ «Այս մոտիկությունը, կնկան միսին այս գրգռող հոտը կզգլխեին զինքը»³⁷: Երևակայության մեջ կնոջ գրկելու հետևյալ պատկերներով Հ. Օշականը հաստատում է, որ մարդը չի կարող բավարարվել միայն հոգևոր

30 Օշական Հակոբ, Երկեր, Եր., 1979, էջ 198: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p.198].

31 Նույն տեղում, էջ 194: [Ibidem].

32 Նույն տեղում, էջ 198: [Ibidem].

33 Սեյրանյան Լուսինե-Լիլիթ, նշված աշխատությունը, էջ 223: [Op. Cit., p. 223].

34 Օշական Հակոբ, Երկեր, Եր., 1979, էջ 229: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p.229].

35 Նույն տեղում, էջ 85: [Ibidem].

36 Նույն տեղում, էջ 117: [Ibidem].

37 Նույն տեղում, էջ 120: [Ibidem].

րով, և որ սեռական սերը բնական երևույթ է. «Ավելի վերջը գրկեցին ալ զայն վերջալույսներուն, սեղմեցին ալ, ամուր, փորձը ընելով մատղաշ ու կակուղ ոչխարի վրա, որ ուշացած կըլլար զատիթափին վրա»³⁸:

Հ. Օշականը այդ ցավի մեծությունը ընդգծելու համար քոքուրներին ներկայացնում է կնոջ հավիտենական փնտրտուքի մեջ: «Համբույրի մը պատմությունը» պատմվածքում գրում է. «Քոքուրները լուռ, անշարժ էին այս անգամ: Կսպասեին, որ ծերուկը բանա իր թևերը, օդին մեջ բան մը գրկե, փաթթվի անոր իր հոգիովը: Հետո կուլային, երբ անոր գլուխը երկննար առաջ, շրթունքները դողային, դողային ու օդին մեջ բան մը կպագնեին»³⁹: Տարփանքն ավելի է ամրացնում քոքուրների «պակաս մասը»՝ նրանցից ոմանց հասցնելով խենթության:

Կին ունենալու սպասումը (Պետիկ տետեն հսկայական խոպանը մշակելի դարձնելու դեպքում խոսացել էր ամուսնացնել Տոգսանին) Տոգսանին մոռացնել է տալիս աշխարհում ամեն բան: Նա կնոջը տեսնում է երագնեբրում, կերտում նրան իր երևակայության մեջ, տեսնում նրա մերկությունը, գեղեցկությունը. «... Պատկերին կեդրոնը կնիկ մը կար ձերմակի վրա, լեցունկ երեսով. կես մը գոց ծիծերուն թոփիկությունը ձյունի մեջ լողցող լորի մը թրթռումովը կլուսցներ Տոգսանին աչքը»⁴⁰: Կնոջ տեսլականը մոռացության է տալիս սահագնացող վտանգը: Տոգսանը չի նկատում հսկայական քարը (որը անհասանելիի խորհրդանիշ է), որին հասնելու դեպքում խոստացված կինը իրենն էր լինելու: Թուրքմենի աղջկա գեղեցկությամբ հմայված մեկ այլ հերոս՝ պատանի Ակոն, ուշք չի դարձնում հոր սպառնալիքին: Անգոր՝ թուրքմենի աղջկան մեկ անգամ ևս տեսնելու ցանկության առջև, կորցնում է իր ոչխարներին և հոր մահակի հարվածից զրկվում տեսողությունից՝ ողջ կյանքում հոգու աչքերով տեսնելով մերկ աղջկան. «Մեկնք էր ան, հուրի մեկնք...»⁴¹:

4. Սոցիալ-հոգեբանական մոտեցում

Հոգեբանական դիրքերից անձի անհատականությունը դառնում է գենդերացված վաղ հասակից (5-6 տարեկանում) և մնում է անփոփոխ: Այսինքն՝ սա այն տարիքն է, երբ արական կամ իգական սեռը սոցիալականացման ընթացքում դառնում է գենդեր, ձեռք է բերում առնականության (մասկուլին) կամ կանացիության (ֆեմինին) առանձնահատկություններ⁴²:

Եվ ահա, քոքուրների վարքագծի պատճառները գրողը որոնում է վաղ մանկության տարիների մեջ: Իսկ քոքուրներից շատերը որբեր էին և իրենց թշվառ ու խեղձ վիճակին, սեփական անձի նկատմամբ հասարակության արհամարհանքին ընտելացած էին մանկուց: Իսկ մանկության և պատանեկության տարիները շատ կարևոր են ապագա մարդու ձևավորման համար: Չկար սոցիալական կարևորագույն այն կառույցը՝ ընտանիքը,

38 Նույն տեղում, էջ 198: [Ibidem].

39 Նույն տեղում, էջ 172: [Ibidem].

40 Նույն տեղում, էջ 37: [Ibidem].

41 Նույն տեղում, էջ 147: [Ibidem].

42 Տեն, **Խաչատրյան Ն. Գ.**, Գենդերի սոցիալական հոգեբանություն, Եր., 2007, էջ 13: [Khachatryan N. G., Genderi socialakan hokebanutyun, Yer., 2007, p. 13].

որտեղ ձևավորվել և զարգանար երեխայի անհատականությունը: Չկար հայրը՝ նույն սեռի ծնողը, որից տղան ընդօրինակել նրա վարքաձևերն ու որակները: Ծնողներից, տնից ու տեղից զրկված որբերը ապրում էին՝ ապաստան գտնելով փողոցում, ուրիշի բակերում, ծառերի ստվերում՝ տաքուկ տեղի համար կռիվ տալով մինչև անգամ կատուների ու աղվեսների հետ: Սովը, ցուրտն ու զրկանքներն էին դառնում մշտական ուղեկիցներ՝ իրենց ծանր ու անջինջ կնիքը թողնելով նրանց հոգու վրա: Սրանք հոգեբանական այն կարևոր գործոններն են, որոնք պայմանավորում են մարդու վարքը սոցիալական միջավայրում: Սոցիալական կառույցների (ընտանիք, դպրոց և այլն) բացակայությունը նույնպես խանգարում էր քոքուրներին՝ պահպանելու և հաստատելու սեփական գենդերային նույնականությունը, դրսևորելու իրենց որպես տվյալ սեռի ներկայացուցիչ: Հենց սրանով էլ Հ. Օշականը արդարացում է քոքուրների գենդերային վարքագիծը, դրա պատճառը համարում դառն մանկության տարիները, «որոնց մեջ մարդը, ապագա մարդը կշինվի, և ուր կերտված մարմինը իր կնիքը կուտա մարդուն մնացած օրերում»⁴³:

Մանկության տարիներին, աղքատ ու որբ երեխան չի զգում իր և իր հասակակից երեխաների տարբերությունը: Բայց երբ արդեն տարիները հաջորդում են իրար, և տարբերությունը ակնհայտ է դառնում, ծայր է առնում օտարացման զգացողությունը: Ծնվում է վախկոտությունը, հետո՝ խեղձությունը: Այս ամենն ի վերջո հանգեցնում է հուսահատության և ճնշում իր վիճակի մեջ ինչ-որ բան փոխելու ձգտումը: Հուսահատությունը ստիպում է աշխարհում հենարան որոնել: Քոքուրների հոգու հենարանը երազն էր՝ կինը, որի համար պատրաստ էին ամեն ինչի. «Ընդունակ են, կնոջ համար ամենէն անկարելի, յիմարական յանդգնությունը գործադրելու, հերիք է, որ ուզուի իրենցմէ»⁴⁴: Ճիշտ է՝ կին ունենալու տեսլականը նրանցից ոմանց ստիպում է անել ուժերի ներածից ավելին, սակայն կնոջ կորուստը վերջնականապես կործանում է նրանց:

Սակայն Հ. Օշականի հերոսների վարքը հոգեբանական նույնականության դիրքերից քննելով նկատում ենք, որ նրա մի քանի պատմվածքների հերոսներ ունեն տղամարդու հոգեբանության համար հատկանշական որակներ, ունակ են կազմակերպելու սեփական կյանքը և ժամանակը:

«Վաթմանը» և «Տոպիձը» պատմվածքների հերոսները, ի տարբերություն մյուս պատմվածքների հերոսների, վայելել են կին, ընտանիք ունենալու քաղցրությունը, կատարել են ընտանիքում տղամարդուն վերապահված դերը՝ ապահովել են ընտանիքի բարեկեցությունը, որոշակի դիրք են գրավել հասարակական կյանքում: Արթինը («Վաթմանը») աջակցել է կնոջը կանացիության պահպանման հարցում: Նրանցից Տոպիձը ուներ տղամարդու համար կարևոր շատ հատկանիշներից մեկը՝ դոմինանտությունը: Նա օժտված էր ֆիզիկական և հոգեկան ուժով, մեծ ներդրում ուներ գյուղացիներին թուրքերի, ալբանացիների և ուրիշ ասպատակների հարձակումներից պաշտպանելու գործում: Ագրեսիվ էր, ցուցաբերում էր հակադրվելու պատրաս-

43 Օշական Հակոբ, Երկեր, Եր., 1979, էջ 30: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p.30].

44 Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 111: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyanyan, hat. 10, Antilias, 1982, p.111].

տակամոթյուն, մրցակից հարաբերություններում՝ դաժանություն, ճնշում գործադրելու ձգտում:

Հ. Օշականը այս քոքուրների ողբերգությունը քննում է այլ հարթության վրա: Գրականագետ Ս. Դվոյանը գրում է. «Ժողովածուի առաջին պատմվածքից մինչև վիպակ քոքուրների խոտորումը սկսվում է որևէ կնոջ հայտնվելուց, կամ որ ավելի բնորոշ է, մտապատկերում կին ունենալու հեռանկարից»⁴⁵: Սակայն կան քոքուրներ, որ քոքուր դառնում են կնոջը կորցնելուց հետո: Այսինքն՝ ի տարբերություն մյուսների՝ նրանք վայելում են կին ունենալու հաճույքը, բայց կնոջ կորուստը կործանում է նրանց: Պետք է նշել, որ «հոգով քոքուր» արտահայտությունը վերաբերում է հենց այս հերոսներին, որովհետև մնացածը պատկանում են «թեթև ծնած»-ների շարքին, իսկ այս հերոսներն ունեն հոգեկան առողջ աշխարհ: Եվ այս հերոսների ներաշխարհի ողբերգությունը պատկերելիս գրողը հաճախ է օգտագործում «իր քոքուրի հոգին», «հոգիով վախկոտ այդ տղան» արտահայտությունը:

Եթե մյուս հերոսներին առավելապես տանջում է սեռի հարցը, այս հերոսների դեպքում «գորավոր ու անողոր» ցավին գումարվում է դավաճանված լինելու անարգանքը: Լավ հասկանալով «երկուքով լեցված անկողնի մը մեջ երրորդի մը»⁴⁶ գոյությունը՝ այնուամենայնիվ, Արթինը չի կարողանում ազատվել կնոջ կախարդանքից: Ու սկսվում է քոքուրացման ընթացքը՝ օրեցօր ավելի ու ավելի ուժեղ զգալով սիրո և անարգանքի ցավը՝ առանց որևէ մեկի հետ այն կիսել կարողանալու տանջանքով: Կնոջը կորցնելու վախը մեծացնում է սերը, և նա փորձում է լրբի մեջ անադարտ կնոջ մաքրությունը բացահայտել: Եվ քոքուրներին բնորոշ՝ անարգանքը շրջանցելու հոգեբանությամբ հերոսը փորձում է կնոջ վարքը արդարացնել մայրաքաղաքում տիրող համընդհանուր բարքերի ազդեցությամբ:

Այլ է Տոպիձի ապրած ողբերգությունը, ում կինը Կ. Պոլիս էր գնացել հենց նրա մեղքով: Չանսալով մեռնող մոր խորհրդին՝ «Տղան, օղին տունը պը խմես»⁴⁷, Տոպիձը քայքայում է իր ընտանիքը, կորցնում իր նկատմամբ շրջապատի մարդկանց հարգանքը: Տարիներ հետո, մոռանալով և՛ իր, և՛ կնոջ ամոթալի անցյալը, հասկանալով իր մեղքը, այնուամենայնիվ, նա դեմ է գնում գյուղի բարքերին՝ ընդունելով Ստամբուլում անբարո կյանք վարած կնոջը, վերագտնելով իր երջանկությունը:

«Տոպիձը» և «Վաթմանը» պատմվածքներում սեռը վերաճում է սիրո, և Հ. Օշականը չի նսեմացնում կնոջ դերը, շեշտադրում է ոչ թե կանանց անբարո վարքը, այլև անձնագոհ սիրո գաղափարը:

Կ. Պոլսի բարքերի ազդեցությամբ է գրողը բացատրում մեկ այլ երևույթ: «Տոգսանը» պատմվածքում գրողը, թեև ոչ բացահայտ կերպով, խոսում է գրականության մեջ կրկին կաղապարված, բայց մարդկության պատմության մեջ վաղուց գոյություն ունեցող երևույթների՝ արվամոլության և սե-

45 Հակոբ Օշական. գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 33: [Hakob Oshakan. gitajoghovi nyuter, Yer., 1979, p.88].

46 Օշական Հակոբ, Երկեր, Եր., 1979, էջ 225: [Oshakan Hakob, Yerker, Yer., 1979, p.225].

47 Նույն տեղում, էջ 100: [ibidem].

ռական շահագործման մասին. «... Տոգսանը ցերեկները չերևցավ գեղին մեջ. մութին տուն կրեբեին, մութին կտանեին: Ու գեշ բաներ կպատմվեին Անձին պզտիկ տղուն, Օննիկին համար: Դրացիները իրարու կփսփսային խորհրդավոր ձևերով ու փսփսուքը կլայնար, բամբասամբ, թե՛ իրակա- նություն կդառնար,- որոշ չի գիտցվիր,- բայց կըսեին թե դերք մը մորուքով այդ խեղճը՝ ամեն օր տարածին չափ կեռ (բեռ) կուտեր կռնակեն»⁴⁸:

5. Ֆունկցիոնալ- դերային մակարդակ

Բացի կանանց բնորոշ հոգեբանական և ֆիզիկական հատկանիշներից՝ Հ. Օշականը ներկայացնում է նաև քոքուրների գործունեության ոլորտը, աշխատանքի բովանդակությունը, որը չէր «խրախուսվում» հասարակու- թյան կողմից: Իսկ հասարակությունը, պահպանողական հասարակություն էր՝ խորը արմատավորված գենդերային կարծրատիպերով:

Քոքուրները երգ ու պարով, կատակներով իրենց շրջապատի մարդ- կանց զվարճացնող, փոքրիկ երեխաներին խնամող անձինք էին, որոնց աշխատանքի բնույթը արդեն իսկ խանգարում էր «իսկական տղամարդու» կերպարի ընկալմանը: Հայ իրականության մեջ ավանդույթի ուժով կա- տարվում էր աշխատանքի բաժանում, ըստ որի՝ տղամարդը՝ որպես ֆի- զիկապես ավելի ուժեղ անձ, ծանր աշխատանքների կրողն էր: Իսկ ահա Հ. Օշականի հերոսների մեծ մասը հիմնականում ֆիզիկապես թույլ, «ոսկոր- ները խմորի պես», «բահէն ու փետատեն» վախեցող մարդիկ էին:

Իր պատմվածքներում Հ. Օշականը, թվում է, կերտել է քոքուրների աշ- խարհը, սակայն «Համապատկեր»-ում և «Մնացորդաց» վեպում առկա մտքերը ընդլայնում են այդ աշխարհի սահմանները՝ սեռի խնդիրը կարևո- րելով բոլորի համար: «Արդ գեղին մեջ առանց կնիկի երիտասարդ մը ող- բերգական է գրեթե միշտ, այսինքն մեկը, որ աչքը կ'առնէ ամէնէն ծանր վտանգները, ու արեան, մահուան գնով միայն կրնայ կինը ձանձալ, ու կը պատժուի անողոք կերպով մը, լեռ բարձրանալու հարկադրուած»⁴⁹:

«Համապատկեր»-ում գրողը քոքուրների ապրումները բնորոշ է հա- մարում ոչ միայն «պակաս ծնածների, այլև՝ գուցէ բոլոր քսանէն վեր այ- րերի»⁵⁰ համար: Այստեղից էլ հասկանալի է դառնում երբեմն անհասկա- նալի թվացող «Օշական իր **քոքուրները** գրեց քոքուրներուն համար»⁵¹ արտահայտությունը, ինչը գրականագետ Կ. Աղաբեկյանը պատվիրում է չընկալել նեղ իմաստով. «Նա հրաշալի գիտեր, որ ինքը գրել է մեծ լա- րանի, ընթերցողների լայն շրջանի, գրել է ընդհանրապես մարդկանց մա- սին՝ մարդկանց համար»⁵²: Ուստի կարող ենք նաև ասել, որ քոքուրների աշխարհը, ինչպես բոլորի, այնպես էլ Հ. Օշականի աշխարհն է՝ կին երա- զելու, կնոջ քմահաճույքներին ծառայելու պատրաստականությամբ, թե- կուզ մահվան գնով կնոջ մարմինը ձանաչելու ցանկությամբ: Եվ քոքուր-

48Նույն տեղում, էջ 33: [Ibidem].

49 **Օշական Յ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 10, Անթիլիաս, 1982, էջ 110: [Oshakan H., Hamapatker arevmtahay grakanutyanyan, hat. 10, Antilias, 1982, p.110].

50Նույն տեղում, էջ 110: [Ibidem].

51Նույն տեղում, էջ 111: [Ibidem].

52 **Աղաբեկյան Կիմ**, Հակոբ Օշական, եր., 2006, էջ 70: [Aghabekyan Kim, Hakob Oshakan, Yer., 2006, p.70].

ների դրամայի պատկերման հաջողությունը պայմանավորված է Հ. Օշականի անձնական զգացողություններով, ապրումներով և հոգևոր փորձառությամբ:

«Մնացորդաց» վեպում Հ. Օշականի արտահայտած հետևյալ մտքերը կարող են վերաբերել նաև «Խոնարհները» շարքի հերոսներին: Գրողը կնոջ գիրկը համեմատում է դագաղի հետ և յուրաքանչյուր «սեռային ցնցում» համարում «փոքրադիր մահ մը, քայքայում մը, առաջ եկած՝ մեր բյուրաւոր փոքրացած եսերէն, որոնց համախմբումն է սերմը, գարշություն ու կյանք, արին ու երազ նոյն ատեն»⁵³:

Օշականյան այս ընկալումների մասին հատկանշական են գրականագետ Լ. Սեյրանյանի դիտարկումները. «Այստեղ էլ լսելի է Աստվածաշնչի փոխկանչը. մինչև հատիկը հողում չմեռնի, հասկ չի ծովի, չի լինի սերնդագործում, ուստի և սերմը գարշություն է ու կյանք միաժամանակ»⁵⁴: **Ուրեմն, ըստ Հ. Օշականի, կյանքը շարժող երկու հիմնական ուժերը սեռական և մահվան բնագոյներն են:**

Գրականագետ Վ. Գաբրիելյանը գրում է. «Այդ հերոսների կյանքի առօրյա պատմությունների ու հոգեկան թաքուն ապրումների միջոցով Օշականը պատկերում է նաև բարքեր, սովորույթներ, փորձելով հայտնաբերել ոչ միայն մարդկայինը, այլև այն, որ «հայեցի» է, «հայ հոգին» է»⁵⁵:

Հետևապես Հ. Օշականի «Խոնարհները» շարքի պատմվածքները հնարավորություն են տալիս պատմական որոշակի ժամանակահատվածում կոնկրետ տարածության մեջ ուսումնասիրելու և ճանաչելու ընդհանրապես՝ տղամարդու, մասնավորապես՝ հայ տղամարդու կենսակերպի և վարքի առանձնահատկությունները:

Մարինե Գ. Ղազարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նորագույն շրջանի հայ գրականությունը, սփյուռքահայ գրականությունը և քննադատությունը, համաշխարհային գրականությունը:

53 **Օշական Յ.**, Մնացորդաց, հատ. Ա, Անթիլիաս, 1988, էջ 222: [**Oshakan H.**, Mnacordac, hat. A, Antilias, 1988, p. 222].

54 **Սեյրանյան Լուսինե-Լիլիթ**, նշված աշխատությունը, էջ 212: [Op. Cit., p. 212].

55 **Գաբրիելյան Վազգեն**, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 55: [**Gabrielyan Vazgen**, Spyrqahay grakanutyun, Yer., 2008, p.55].

Summary

THE SOCIAL-PSYCHOLOGICAL MANIFESTATIONS OF GENDER

In collection “The Humbles” by Hagop Oshagan

Marine D. Ghazaryan

Key words – “The Humbles”, qoqur, love, sex, gender, psychological identification, woman, waiting, dream, reality, inner drama.

The Armenian diaspora writer Hagop Oshagan had a number of significant principles, to perceive and illustrate reality, one of which was based on the absolutization of sex. The best examples of viewing literature in this regard, is the collection “The Humbles” (1920).

In “The Humbles” Oshagan mostly created characters of a certain human type – that of the poor, the wretched, and the mad, ones who he called with the generalized name of **qoqur**. *Qoqurs* are individuals, who due to mental, physical impairments, or by the whim of fate have become **qoqurs from within**. *Qoqurs*, created by Oshagan, are mainly men deprived of assumed male traits. The society was not willing to give these men a wife, and this is where their drama unfolds.

As every society has certain cultural norms that shape the gender relations in the society, we have interpreted Oshagan’s characters, behavior from social-cultural aspects.

At the beginning of the 20th century when in the scientific vocabulary there was no distinction between “sex” and “gender” terms, on the example of his heroes the writer shows the gender is related to society expectations and is not just a biological issue.

Although gender was mentioned back in different works written in the 1300s, however the terms “gender” and “sex” were coined in the scientific terminology in 1950s. Whether Oshagan was aware of them or not is difficult to say since there is no word “gender” in any of the stories. But the fact that the author realized the difference between biological and psychological sexes is obvious. This fact allows us to claim that the ability to depict the unconscious aesthetically is typical of Oshagan as a writer.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՊՈՐԱՑԻՆԻ ԱՐԿԻՎԻ ԿՈՒՆԿԵՐՊՈՐԱՑԻՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2017 թ. (ԺԵ) ԳԽԻԻ, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017 թ. համահայկական հանդես

ПРОЯВЛЕНИЯ СОЦИАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ ГЕНДЕРА

В сборнике Акопа Ошакана «Смиренные»

Марине Д. Казарян

Ключевые слова – смирение, кокур, пол, любовь, гендер, психологическая идентификация, женщина, ожидание, мечта, реальность, внутренняя драма.

Писатель армянской диаспоры Акоп Ошакан имел ряд ключевых принципов для восприятия искусства, одним из которых является половое совершенство. Основываясь на этом принципе наилучшим примером для подхода к литературе Акопа Ошакана является опубликованный писателем сборник рассказов «Смиренные» (1920 г.). В сборнике «Смиренные» Ошакан создал человеческие образы в виде нищих, безумцев и бедняков, которым и дал общее название «кокур». Кокурами являлись мужчины с врожденными дефектами и ставшими по воле судьбы «душой кокур», лишённые якобы мужских признаков. Общество не желает им отдавать женщину, они страдают от похоти иметь ее, что и становится причиной их трагедии.

Так как каждое общество имеет определенные культурные нормы, формирующие в ней гендерные взаимоотношения, поведение персонажей Ошакана интерпретируется в социально-культурном аспекте.

Писатель, приводя примеры героев своих рассказов в начале 20-го века, когда в научном лексиконе пока еще не были отмечены термины «пол» и «гендер», показывает, что гендер связан с устоями общества и не является только лишь биологическим вопросом.

Несмотря на то, что упоминания о гендере существовали все еще в различных работах 1300-х годов, эти термины в научный лексикон вошли с 1950 года. Говорить о том, что Ошакан знал о них или нет трудно утверждать, так как ни в каких из его рассказов не употребляется слово «гендер». Но то, что писатель точно осознавал отличие биологического пола от психологического уже очевидно. Это обстоятельство позволяет с уверенностью говорить о том, что писателю Ошакану присуща способность художественного представления неосознанного.